ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-13/2020
21.12.2015թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-13 պետական գնման պայմանագրի

ք. Երևան « 20 » « 02 » **2020թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյան, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՊԱՆԻ ՃՇՇ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Կարապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 21.12.2015թ. կնքված N**ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-13** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 փոփոխել և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2020 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 179,323,655 (մեկ հարյուր յոթանասունինը միլիոն երեք հարյուր քսաներեք հազար վեց հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը,տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Գնման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

1.3 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի:

1.4 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները համաձայն հավելված 3-ի:

1.5 Պայմանագրի 2.4 կետ կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«2.4.4 Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ընթացքում ապահովել կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին դեպքի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից»:

1.6 Պայմանագրի 7-րդ «Այլ պայմաններ» բաժինը լրացնել նոր 7.10 և 7.11 կետերով և շարադրել դրանք հետևյալ խմբագրությամբ.

«7.10 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:
7.11 Կատարողը ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից)»:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020թ հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2020թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«ԿԱՊԱՆԻ ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, ք. Կապան, Գործարանային 53
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
ՀՎՀՀ 02815457	ՀՀ 2470800021620000
ՀՀ 900011012136	ՀՎՀՀ 09402057
գլխավոր քարտուղարին փոխարինող	տնօրեն
Հ. Բատիկյան	Ա. Կարապետյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հաստատված է
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-13 գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-13/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ (2020 թ. իրականացվելիք)

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	2020թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	41,560,717	57,317,741	50,949,103	29,496,093	179,323,655

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԿԱՊԱՆԻ ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, ք. Կապան, Գործարանային 53
«Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
ՀՀ 2470800021620000
ՀՎՀՀ 09402057
տնօրեն
Ա. Կարապետյան

/ստորագրության/
Կ.Տ.

«20» «02» 2020թ. կնքված
Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-13/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ (2020 թ. իրականացվելիք)

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	-	29,092,502	29,092,502	81,683,136	81,683,136	81,683,136	134,542,831	134,542,831	134,542,831	179,323,655	179,323,655	179,323,655	**179,323,655**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԿԱՊԱՆԻ ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, ք. Կապան, Գործարանային 53
«Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
ՀՀ 2470800021620000
ՀՎՀՀ 09402057
տնօրեն
Ա. Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ.

«20» «02» 2020թ. կնքված
Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-13/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 3

2020թ. Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 278,1-կմ330,8	Միջպետական II-IV	52.70		Լավ	49.70	454.177	22572.597
Մ17, Մ2-Կապան-Ծավ-Մ2 կմ0.0-կմ40.8	Միջպետական II-IV	40.80		Լավ	40.80	454.177	18530.422
Հ46, Մ2-Թաթև-Աղվանի-Մ2 կմ35,0-կմ68,0	Հանրապետական I-IV	33.00		Միջին	33.00	306.912	10128.096
Հ72, Մ2-Վահանավանք կմ0-կմ 2,4	Հանրապետական I-IV	2.40		Բավարար	2.40	299.909	719.782
Ընդամենը		128.90			125.90		51950.896
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 278,1-կմ330,8	Միջպետական II-IV	52.70	Երաշխ.Մե(0)	Լավ	6.4	471.50	3017.606
			Լավ. ՄԼ(I)	Լավ	5.2	678.326	3527.295
			Բավարար ՄԲ(II)	Միջին	33.40	1485.306	49609.220
Մ17, Մ-2-Կապան-Ծավ-Մ2 կմ0.0-կմ40.8	Միջպետական II-IV	40.80	Լավ ՄԼ(I)	Լավ	10.50	678.326	7122.423
			Բավարար ՄԲ(II)	Միջին	30.30	1485.306	45004.772
Հ46, /Մ-2/-Թաթև-Աղվանի-Մ2 կմ 35.0-կմ 68.0	Հանրապետական I-IV	33.00	Բավարար ՀԲ(II)	Բավարար	13.00	1239.704	16116.152
Հ72, Մ2-Վահանավանք կմ0-կմ 2,4	Հանրապետական I-IV	2.40	Բավարար ՀԲ(II)	Բավարար	2.40	1239.704	2975.290
Ընդամենը		128.90			101.20		127372.758
Ընդամենը Կապանի տարածաշրջանով							179323.655

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԿԱՊԱՆԻ ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, ք. Կապան, Գործարանային 53
«Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ
ՀՀ 2470800021620000
ՀՎՀՀ 09402057
տնօրեն
Ա. Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ.